

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՋԱՆՖԻՂԱ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱԿԱՐԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻ ԿԻՍԱՄՅԱԿԻ

2014 թվականի 1-ի կիսամյակի ընթացքում ստացվել են 85 դիմում բողոքներ: Քննարկվել են բոլոր դիմում բողոքները և տրվել են պատասխաններ: Քաղաքացիների ընդունելությունների թիվը կազմում է 98 մարդ: Ստացվել են 90 պաշտոնական գրություններ, որոնք քննարկվել և տրվել են պատասխաններ:

Նախապատրաստվել և տարբեր կազմակերպություններին են ուղարկվել 98 պաշտոնական գրություններ:

Անցկացվել է ավագանու 6 նիստ, որոնք արձանագրվել և վավերացվել են ավագանու անդամների կողմից:

2014 թվականի ընթացքում համայնքի ղեկավարի կողմից արձակվել է 11 կարգադրություն և ընդունվել 47 որոշում:

Համայնքի անդամների 85 դիմում բողոքների հիման վրա կատարվել է 25 հողամասերի չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ, 5 դիմումներ՝ պտղատու և խաղողի այգիների հիմնման աշխատանքների ակտավորման գործընթացի համար, իսկ մնացած 55 դիմումները քննարկվել և տրվել է կոնկրետ պատասխաններ: Հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպվել և անցկացվել է երիտասարդական, հայրենասիրական և այլ տեսակի միջոցառումներ:

Փետրվարի սկզբին գյուղապետարանի շենքում կազմակերպվել և անցկացվել է շախմատի ավանդական մրցաշար՝ նվիրված Արցախյան ազատամարտին նվիրված Ջանֆիղայի գոհված ազատամարտիկների հիշատակին:

Մրցաշարում հաղթող 4 շախմատիստներ պարգևատրվել են նվերներով, իսկ 11 գոհված ազատամարտիկների հարազատներին՝ նվերներ և դրամական պարգևներ, որից հետո գոհված ազատամարտիկների հիշատակին տրվել է ճաշկերույթ: Կանանց միջազգային օրվա՝ մարտի 8-ի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում՝ դպրոցի, առողջության կենտրոնի և գյուղապետարանի շուրջ 75 կանանց տրվել են ծաղիկներ և նվերներ:

Մայիսի 9-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի օրվան, որի ժամանակ ծաղկեպսակներ և թարմ ծաղիկներ են դրվել գոհված մարտիկների հուշարձանին, իսկ պատերազմի վետերաններին տրվել են դրամական պարգևներ:

Մայիսի 10-ին կազմակերպվել է միջոցառում նվիրված բարերար Արթուր Խանամիրի Կարապետյանի կողմից կառուցված Սուրբ Կարապետ եկեղեցու օծման և բացման կապակցության:

Մայիսի 28-ին ռուսական սահմանապահ զորքերի օրվան նվիրված տոնակատարության համար նվերներ են տրվել ուղեկալի անձնակազմին:

Ամիսը 2 անգամ կատարվում է փողոցների աղբահանություն գյուղապետարանի միջոցների հաշվին:

Կատարվել են խմելու ջրի վարակազերծում և ժամանակին կատարվում է ջրամատակարարման աշխատանքները / ձմռան ամիսներին օրական 2 անգամ 2-3 ժամ, իսկ մնացած ամիսներին օրական 2 անգամ 4-6 ժամ/:

Կատարվել են համայնքի փողոցների և դաշտամիջյան ճանապարհների վերանորոգման և ավագապատման աշխատանքներ:

Ներկրվել և համայնքի հող օգտագործողներին է տրվել 200.0 տոննա ազոտական պարատանյութեր և 40.0 տոննա դիզ Վառելանյութ:

Համայնքում գործում են 1 միջնակարգ դպրոց, 1 առողջության կենտրոն և 1 մանկապարտեզ:
 Առողջության կենտրոնում գրանցված բնակչության թիվը կազմում է 3184 բնակիչ:
 Հաճախումների թիվը կազմել է 1651 մարդ, որից մեծեր՝ 749, փոքրեր՝ 902:
 Գրանցվել է 168 տնային կանչեր, որից մեծեր՝ 80, իսկ փոքրեր՝ 88:
 Պրոֆիլակտիկ նպատակով սպասարկվել է 1238 մարդ, որից մեծեր՝ 203, փոքրեր՝ 1035:
 Նեղ մասնագետների կոնսուլտացիա ստացել են 345 հիվանդներ:
 Առողջության կենտրոնը գործում է որպես ընտանեկան, որտեղ իրականացվում է ընտանեկան բժշկություն:
 «Վազգեն Սարգսյանի» անվան մանկապարտեզը գործում է ապրիլի 1-ից մինչև հոկտեմբերի 31-ը 3 խմբով, հաճախում ցուցակային 82 երեխա:
 Կազմվել է նախագիծ 2014 թվականին Ջանֆիդա գյուղը 100 տոկոսով գազաֆիկացնելու համար:

Եկամուտները 2014 թվականի

1. Հողի հարկի - 2019.9 հազ դրամ
2. Գույքահարկ - 3526.0 հազ.
3. Դոտացիա - 20476.0 հազ. դրամ
4. Կապիտալ գործառնություն / հողի օտարում / 2672.2 հազ. դրամ,

Ծախսեր

1. Աշխատավարձ - 9277.9 հազ. դրամ
2. Սուբսիդիա - 5505.0 հազ. դրամ
3. Սոց օգնություն - 2346.0 հազ դրամ
4. Ծառայությունների և ապրանքների ձեռք բերում - 8458.1 հազ. դրամ
5. Կապիտալ կառուցում և վերանորոգում - 1514.0 հազ. դրամ

Համայնքի առջև ծառայած հիմնական խնդիրները:

1. Կուլտուրայի տան հիմնանորոգում
2. Մանկապարտեզի շենքի հիմնանորոգում և գազաֆիկացում
3. Խմելու ջրագծերի խողովակաշարերի վերանորոգում
4. Գազաֆիկացում / շարունակական /
5. Գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատում և ավազապատում

Ջանֆիդա համայնքի ղեկավար



Ռ. Եղիազարյան

2014 թվական հուլիսի 16
 գ. Ջանֆիդա